

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության
Վարչություն

Ուղեցույց մաքրող անձնակազմի համար

Յուրաքանչյուր գործատու պետք է ունենա աշխատողների պաշտամանության քաղաքականություն և մաքրող անձնակազմին դասընթաց տրամադրի, որը ներառում է՝ մաքրելու և ախտահանելու ճիշտ մեթոդներ, երբ է հարկավոր օգտագործել հատուկ հանդերձանք կամ անձնական պաշտպանիչ միջոցներ (ԱՊՄ), և թե ինչպես ճիշտ եղանակով ազատվել թափոնից՝ մաքրելը վերջացնելուց հետո:

Այս ուղեցույցը մաքրող անձնակազմի համար է, ովքեր մաքրման ծառայություններ են մատուցում հանրային վայրերում: Այս ՉԻ փոխարինում առօրյա մաքրման և ախտահանման գործընթացներին, այլ հավելյալ տեղեկություններ է տրամադրում կանխարգելելու շնչառական վարակների տարածումը, ինչպիսին է COVID-19-ը: Մաքրման ուղեցույցին հետևելն ապահովում է հաստատությունների արդյունավետ մաքրումը, միաժամանակ՝ պատշաճ կերպով պաշտպանելով մաքրող անձնակազմին:

Հավելյալ տեղեկությունների համար, տես՝ Հանրային Առողջապահության COVID-19 ինտերնետայում էջում տեղադրված [Մաքրումը Հանրային Շինություններում](#) փաստաթուղթը և [Մաքրել և Ախտահանել](#) աղյուսակը:

Անձնական Պաշտպանիչ Միջոցներ (ԱՊՄ)

- Աշխատանքային ամբողջ օրվա ընթացքում կրեք կտորե դեմքի ծածկոցներ, երբ շփվում եք, կամ հավանական է, որ կշփվեք ուրիշների հետ:
- Կրեք մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ, երբ մաքրման աշխատանքի պարտականություններն եք կատարում:
- Կրեք պաշտպանիչ ակնոցներ/դեմքի վահան, եթե քիմիական նյութերը կարող են ցայտել:
- Կրեք համապատասխան պաշտպանիչ հագուստ (գոգնոց)՝ համապատասխան առկա քաղաքականությանը:
- Օգտագործելուց հետո, զգուշորեն հանեք ձեռնոցները և աղբը նետեք:
- Անմիջապես լվացեք ձեր ձեռքերը կամ ձեռքերի ախտահանիչ միջոց օգտագործեք:

Անվտանգ գործառույթներ

- Հնարավորինս սահմանափակեք ուրիշների հետ սերտ շփումը՝ պահպանելով առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն:
- Ամեն օր լվացեք դեմքի կտորե ծածկոցները:
- Աշխատանքային հագուստը/համազգեստը սովորականի պես կանոնավոր լվացեք:
- Խուսափեք չվացած ձեռքերով ձեր աչքերին, քթին կամ բերանին հպվելուց:
- Հազալիս կամ փռշտալիս ձեր քիթն ու բերանը ծածկեք անձեռոցիկով կամ արմուկով (ոչ թե ձեռքերի ափերով):

Ձեռքերը լվանալ

- Կանոնավոր կերպով լվացեք ձեր ձեռքերը օճառով և ջրով՝ առնվազն 20 վայրկյան:
- Չորացրեք ձեր ձեռքերը՝ օգտագործելով մաքուր սրբիչ կամ օգտվեք օդով չորացնող սարքից:
- Եթե ձեռքի տակ օճառ և ջուր չկան, օգտագործեք առնվազն 60% սպիրտային հիմքով ձեռքերի ախտահանիչ միջոց:
- Աշխատանքի ընթացքում ձեռքերը մաքրելու կարևոր պահերը ներառում են.
 - Աշխատանքային հերթափոխից առաջ և հետո
 - Ընդմիջումներից առաջ և հետո
 - Մաքրման աշխատանքներն ավարտելուց և ձեռնոցները հանելուց հետո
 - Դեմքի կտորե ծածկոցը հագնելուց, ձեռք տալուց կամ հանելուց հետո:
- Ձեռքերը լվանալու լրացուցիչ պահեր.

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության
Վարչություն

Ուղեցույց մաքրող անձնակազմի համար

- Մնուկ պատրաստելուց առաջ, ընթացքում և հետո:
- Մնուկ ուտելուց առաջ
- Չուգարանից օգտվելուց հետո
- Զիթը մաքրելուց, հազարուց կամ փոշտալուց հետո:

Ինչպես մաքրել և ախտահանել

- Հաճախակի մաքրեք “շատ հպվող” մակերեսները, ինչպիսիք են՝ սեղանների երեսները, դռների բռնակները, հոսանքի անջատիչները, բաղնիքի հարմարանքները, զուգարանակոնքերը, աղբամանները, հեռախոսները, հեռակառավարման վահանակները, ստեղնաշարները, պլանշետները և անկողնուն կից սեղանները: Օգտագործեք Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության (EPA) կողմից հաստատված ապրանք, որը մաքրում (հեռացնում է մանրէները) և ախտահանում է (ոչնչացնում է մանրէները):
- Միշտ հետևեք մաքրող և ախտահանող ապրանքների պիտակների ցուցումներին:
- Հնարավորության դեպքում, մաքրելիս բացեք դռներն ու պատուհանները:
- Պինդ, անձակոտկեն մակերեսներ.
 - Սրբեք կամ քերեք այնպիսի մակերեսները ինչպիսիք են՝ հատակները, սեղանները, աշխատասեղանները, լվացարանները, զուգարանակոնքերը և/կամ այլ պինդ մակերեսով կահույքը և սարքավորումները՝ օգտագործելով կենցաղային մաքրող նյութեր կամ օճառ/լվացող հեղուկ և գոլ ջուր՝ կեղտն ու մանրէները հեռացնելու համար:
 - Ախտահանեք այս նույն մակերեսները EPA-ի կողմից հաստատված ախտահանիչով: Եթե EPA-ի կողմից հաստատված ախտահանիչ չունեք, օգտագործեք 2%-անոց քլորային թարմ լուծույթ (մոտավորապես՝ 1 կվարտ ջրին ավելացրած 1 ճաշի գդալ քլոր). Զրոյային լուծույթը պատրաստեք ամեն օր, կամ՝ ըստ անհրաժեշտության: Կարող եք օգտագործել չափող ժապավեն- թեստեր՝ հավաստիանալու, որ լուծույթը ախտահանելու համար բավարար խտություն ունի:
- Փափուկ և ներծծող մակերեսներ (գորգեր, բազմոցներ և այլն).
 - Փոշեծծիչով մաքրեք, որպեսզի հեռացնեք փոշին և թույլ չտաք, որ այն օդի մեջ խառնվի:
 - Լավ մաքրեք մարմնի հեղուկների հետքերը՝ համաձայն առկա քաղաքականության և ընթացակարգերի:
 - Մաքրեք ծակոտկեն մակերևույթների վրայի տեսանելի կեղտաբծերը (օր.՝ գորգեր, կահույք և վարագույրներ)՝ դրանց վրա նշված համապատասխան մաքրող նյութերով:
 - Անհրաժեշտության դեպքում՝ գորգերի և այլ ծակոտկեն մակերեսների համար օգտագործեք գոլորշիով մաքրող սարք

Լվացք

- Կեղտոտ լվացքի հետ աշխատելիս՝ կրեք մեկանգամյան օգտագործման ձեռնոցներ:
- Թափ մի տվեք կեղտոտ լվացքը:
- Հիվանդ մարդու կեղտոտ լվացքը կարելի է լվանալը այլ մարդկանց իրերի հետ:
- Լվացեք իրերը արտադրողի ցուցումներին համապատասխան: Կիրառեք լվացքի մեքենայի և չորանոցի համապատասխան ամենաբարձր լվացող միջոցը և իրերը ամբողջովին չորացրեք:
- Մաքրեք և ախտահանեք շորերի զամբյուղները՝ պինդ մակերեսների համար վերոնշյալ ցուցումներին համապատասխան:
- Հանեք ձեռնոցները և անմիջապես լվացեք ձեռքերը:

Աղբը թափելը

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության
Վարչություն

Ուղեցույց մաքրող անձնակազմի համար

- Աղբի հետ աշխատելիս ձեռնոցներ կրեք:
- Ամբողջ աղբը հարկավոր է դեն նետել պլաստիկ տոպրակի մեջ հավաքած:
- Աղբը դրեք անմիջապես աղբամանի մեջ:
- Բժշկական թափոնների դեպքում, հարկավոր է հետևել ձեր հաստատության առկա քաղաքականությանն ու ընթացակարգերին:
- Հանեք ձեռնոցները և անմիջապես լվացեք ձեռքերը:

Հանրային Շինություններում մաքրման վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար, այցելեք՝
<http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/docs/protection/GuidanceCleaning-English.pdf>

Որոշակի տարածքների մաքրման վերաբերյալ հավելյալ տեղեկություններ կարող եք ձեռք բերել,
այցելելով՝
<http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/>